





Բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ.

ԱՐԱՋ ՀՈԳԻՆ ԱՐԱՋ ՄԱՐՄԻՆԻ ՄԷ

Ա.-ՊԵՏԵՐԲՈՒԽԻՂ

ՊՈՒԾ ԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻԳ ՏՊԱՐԱՆ

1900

16443

Дозволено цензурою. С.-Петербургъ. 18 Сентября 1900 года.



35-2008

Типографія „Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.

ԱԹՈՐԻ, ՀԱԳԻՒՆ ԱԹՈՐԻ, ՄԱՐՄՈՒՆԻ ՄԻՇ.

ինչ է առողջութիւնը.

Ուղեղի ու նեարդերի դերը.

Մոածողութիւն, դզացմունք ու կամք.

Մարդումներ.

Մանկական խաղեր, նրանց նշանակութիւնն ու
ազգեցութիւնը.

Խաղերն իբրև հանգստանալու միջոց.

Խաղերն Անգլիակում.

Օդի կարևորութիւնը.

Ժառանգականութիւն, շրջան, նեարդային դար.

Վերածնութիւն և արիութիւն:

Կոր քրոջորդի Յակովիկ

Չիլինկարեանին.

Յակովիկ, քեզ եմ նուիրում այս զրբոյկը. Դու որ
ապագային կեանքի կռուի զժուարին ասպարէզը պիտի
մտնես և կարողութեանդ շափ մարդկութեան ու հայրե-
նիքիդ պիտի ծառացես, մի մոռանալ երբեք այս ոսկեղէն
առածը. «Առողջ հոգին առողջ մարմնի մէջ»:
Այսպէս միայն կեանքը քաղցր կը թուի և քո ջան-
քերդ արդիւնաշատ:

Այս է քո քեռու մի միակ ցանկութիւնը:



ԱԹՈՂ.Ք. ՀՈԳԻՆ ԱԹՈՂ.Ք. ՄԱՐՄԻՒ ՄԵԶ.

Ինչ խորիմաստ, հին և մի և նոյն ժամանակ յափտեան նոր ճշմարտութիւն են պարունակում այդ խօսքերը, որոնք մարդուս հոգեկան և ֆիզիքական ուժերի ներդաշնակ զարգացման ու զաստիարակութեան կանոնն են ամիոփում:

Վ.Ճգ դարձուածքը, այդ հին առածն ոսկի տառերով պիտի փորագրուած լինի իւրաքանչիւր մանկանոցի ու դպրոցի գռների վերայ, իւրաքանչիւր ծնողի ու դաստիակի սրտում:

Ե նկատի առնելով որ հին ժամանակներից մինչեւ մեր օրերն այս իմաստուն խրատն անմոռանալի է մեացել մարդկանց մտքերում, պէտք էր կարծել, թէ նա արդէն վաղուց գործադրվում է եթէ ոչ բոլոր, գոնէ քաղաքակրթուող ազգերի մէջ, մտել է նրանց մարմնի ու արեան մէջ և մի ուղեցոյց—աստղ է դարձել նրանց զաւակների դաստիարակութեան ծանր ու գժուարին գործում:

Այսպէս իրականութիւնն այդ չէ ցոյց տալիս:

Վ.Ճգ կանոնն աւելի գործադրվում էր հին աշխարհում, Յոյների և մանաւանդ Վթենացւոց մէջ, այդ պատճառով էլ Վթենացիք յայտնի էին իրենց ձգտումներով դէպի լաւը՝ այսինքն գեղեցիկն, առողջն ու բարին՝ այսինքն առաքինութիւնը:

Հոգեկան ու ֆիզիքական ուժերի ներդաշնակ զարդացման շնորհիւ նրանքը այնպիսի կատարելութեան հասան, որին այսօր շատ կրնախանձէինք:

Այն Ծոյները, մանաւանդ Վթենացիք, յայտնի էին իրենց գեղեցիկ ու առողդ կաղմուածքով, առողջութեամբ, և առողջ մտաւոր ուժերով:

Վ.ԵԴ հանդամանքների շնորհիւ նրանքը մինչև խորին ծերութիւն պահպանում էին իրենց անձի առողջութիւնն ու մտաւոր ուժերի թարմութիւնը:

Վ.Պ հասարակ հին Ծունաստանի և աղջերի պատմութեան մէջ ացրի է ըսկնում մի հանգամանքը. երբ որ և է ազգ, կամ քաղաք ուշի ուշով հետեւում էր այս խրատի գործադրութեան, նա հասնում էր զարգացման ու փառքի գաղաթնակետին:

Խակ ինչ ազդ որ արհամարհում էր այդ կանոնը, նա սկսում էր թուլանալ և անկման աստիճանին էր հասնում:

Կրցն իսկ Վթենացոց անկումը սկսեց այն ժամանակից, երբ նրանք իրենց յաղթանակների փառքով շացած կամ գերազասելով մտաւոր զարգացումը, ֆիզիքական վարժութիւնն սկսեցին արհամարհել:

Ուրիշ պատկեր էին ներկայացնում Վոլարտացիք:

Կրանց ծաղկեալ գրութիւնը համեմատարար շատ կարծ տնեց, որովհետեւ չափազանց հետեւելով ֆիզիքական զարգացման՝ բարձի թողի էին անում բարդյական ու մտաւոր զարգացումը:

Հոռվմայեցիք, որոնք նոյնպէս շատ չէին դնահատում այս օրէնքը, այն ժամանակ իրենց անկումը պատրաստեցին, երբ նրանց վարք ու բարքը բոլորովին ապականուեցաւ, այսինքն հետեւելով լոկ զուարձութիւնների մոռացան հոգեկան ու մարմնական ուժերի ներդաշնակ զարգացման վերայ հոգ տանել:

Վիճնադարեան ասպետութիւնն իւր պատմական բովանդակ փառքը նոյնպէս վերոյիշեալ կանոնին է պատական:


Վագետական առարինութիւնն ու պարտաւորութիւն
նը մի կողմից պահանջում էր քաջ լինել ու անվախ, միւս
կողմից անրիծ ու ամբասիր, այսինքն անարատ հողով ու
մարմնով:

Ա երջին ժամանակներս այս խորիմաստ կանոնը
կրկին սկսել է նշանաւոր մանկավարժների ու բժիշկների
ու չաղրութիւնն իւր վրայ դարձնել:

Տեսնելով թէ ինչպէս մատաղ սերունդը մեր ժամա-
նակներում ֆիզիքապէս ու հոգեպէս թուլացած է, ինչ-
պէս նիշար ու թուլանեարդ մի սերունդ է պատրաստ-
վում, նորից սկսեցին քարոզել բողոք բարձրացնել այժ-
մեան դաստիարակութեան միակողմանի ուղղութեան դէմ;
որ մի միայն մտաւոր զարգացման մասին է հոգս տանում;
բոլորովին անտես անելով ֆիզիքական զարգացումը:

Արանք նորից սկսեցին քարոզել մի շատ հին քա-
րոզ թէ դաստիարակութեան ամենալաւ եղանակն է մշա-
կել «առողջ հոգի առողջ մարման ի մէջ»:





Ե

Խն2 Ե ԱՌԱՊ, ԹԱԻԹԻՒՆԻ

Առողջաբանների ասելով՝ առողջ է այն մարդը, որի կեանքի հոսանքն ամենալաւ պայմաններում է անց կենում, այսինքն՝ մի կողմից նրա կեանքն ամենալաւ ընթացք ունի իւր կազմուածքում, միւս կողմից նրա կեանքին նպաստում էն շրջապատող լաւ պայմաններ:

Ուրեմն՝ առողջութիւն պահպաննելու համար մարդուս հարկաւոր է.

ա. Հոգ տանել, որ մարմնի գործարաններն ամենալաւ դրութեան մէջ լինին, որովհետեւ մի միայն նրանց օգնութեամբ մարդը կարող է առաջ տանել իւր կեանքը:

բ. Աշխատել որ շրջանը, որքան կարելի է նպաստէ կեանքի բոլոր ոյժերն երեան հանելու:

Այդ պայմաններից մէկի կամ միւսի խախտումը պատճառ կը լինի գործարանների կանոնաւոր պաշտօնից շեղուելուն կամ աւելի պարզ ասելով՝ հիւանդութեան պատճառ կը լինի:

Ե.

Մարդու մարմնի գործարաններից ամենակարևորը, որ կանոնաւորում է թէ մատոր և թէ հողեկան կեանքը, զլիսի ուղեղն է:

Մարդու ուղեղի առողջութիւնից է կախուած հոգու և մարմնի բարորութիւնը:

Մեր կաղմաւածքի զլիսաւոր կառավարից՝ զլիսի ուղեղն է, որի մշտական ու անխոնջ օդնականներն են ողնուցեղը (ողնաշարի ուղեղը) և նեարգերը:

Այդ երեք գործարանները պահպանում են մեր մարմնի բոլոր գործարանների կանոնաւոր աշխատութիւնը, անընդհատ հաղորդակցելով նրանց թէ արտաքին և թէ ներքին աշխարհի հետ:

Մեր կաղմաւածքի լաւ զրութիւնը կախումն ունի նեարգերի առողջ լինելուց:

Իսկ ընդհակառակը, որ և է նեարդի քայքայումն առաջ է բերում այնպիսի տանջալից բուպէներ, երբ մարդս կարծես անբաւական ինքն իրանից և ուրիշներից՝ թունաւորում է թէ իւր և թէ ուրիշների կեանքը:

Այս զրութիւնը կարելի է արտայսցակել հետեւալ բառերով՝ հիւանդ հողի հիւանդ մարմնի մէջ»:

Ի՞նչպէս պէտք է այդ չարիքից հեռու մնալ:

Մարդու զարգացման ամենալիսաւոր գործը նրա հոգու երեք նշանաւոր ընդունակութիւնների, այն է՝ մատճողութեան, զգացման և կամքի զարգացման մէջ է կայսնում:

Վ.

Երեխային փոքր հասակից ուղիղ մտածել սովորեցնելու համար պէտք է հոգալ, որ նրա հենց առաջին օրուայ ստացած ապաւորութիւններն առողջ մտապատկերներ հաղորդեն ուղեղին:

Յետոյ այդ մտապատկերներից կամաց կամաց սկիզբն է առնում գաղափարների մի հաւաքածու, որ ապաւորելով ուղեղում՝ կազմումէ այն գանձը, որին գիտութիւն ենք անուանում:

Յաջողութիւն ունենալու համար այս գեղքում պէտք է սկզբում երեխային սովորեցնել ապաւորութիւններ ստանալ քիչ քիչ, մեծ բնույթումներով և աւելի մեղմ ձեռով, այդ պահանջումէ երեխայի քնքոյշ կազմուածքը:

Այնուհետեւ պէտք է հոգալ որպէս զե այն ինչ որ զգայարաններով է բնույնում, փոքր առ փոքր ապաւորուին նաև ուղեղում, թէկուզ հենց ի նկատի ունենալով այն ձեր, ինչ ձեռով երեխան ինքն է կատարելագործվում, այն է մի խօսք մի քանի անգամ կրկնելով՝ արգեն սովորում է, կամ որ և է առարկայի հետ խաղալով՝ այնքան է կրօկնում, մինչեւ որ ապաւորվում է ուղեղում:

Զէ կարելի մեր ժամանակը մեղաղքել որ քիչ քան է արել երեխանների հոգեկան զործունեութեան և զգայարանների կրթութեան համար:

Բնուհակառակը՝ պէտք է մեղաղքել, որ նա աւելի շատ է արել քան հարկաւոր է:

Օրինակ, շուտ սկսելով այդ զարգացումն երեխայի ուղեղը բազմաթիւ ապաւորութիւններով ծանրաբեռնուել է:

Այդ հանդամանքի հետևանքն է մասար ու մարմնական թուլութիւն:

Սորա պատճառով երեխան կորցնում է հոգեկան ու մարմնական զործունեութեան հաւասարակշռութիւնը, որ և արասյայտվում է որ և է նեարդային հիւանելութեամբ:

Հոգեկան զործունեութեան երկրորդ ձեր զգացումն է:

Զգացումներից Են ծագում մեր ուրախութիւնն ու ախրութիւնը:

Նրանք մինչեւ անդամ ազգում հն հոգեկան զործունեութեան երրորդ ձեփի այն է՝ կամքի ու զորդործութեան վերայ:

Աւսափ, որքան կարելի է, պէտք է աշխատել որ երեխան ամենապաւ ապաւորութիւններ ստանայ, իսկ ընդհակառակը՝ երեխաններին պէտք է վաստավաւորութիւններից հեռացնել:

Խնդիր երեխայի ստամնքար կարող է վսառել պինդ ու գժուարամարս կերակրից, նցնպէս ել վաստավաւորութիւնները կարող են նրա կեանքը թունաւորել:

Երեխան իւր կեանքի մեջ շատ անյաջողութիւնների կարող է հանդիպել:

Այդ անյաջողութիւնները յայտնի չափով կարող են օգտակար լինել, մի կողմից իրեւ հակապատկեր, միւս կողմից երեխան աւելի լաւ կը պատրաս-

աէ իւր զգացարաններն ու զգացումը կեանքի լուրջ գեպքերում մաքառելու համար:

Խղճալի է այն մարզը, որ դիտէ ծովի հարթ ու հանդիսաւ մակերեցյթի վերայ միայն լողալ և յանկարծ փոթորկի է հանդիսում. այնպէս և այն մարզը, որ մեծացել է միայն ուրախութեան ու հաճելի սպաւորութիւնների մէջ, մի որ և է զրցրախառութիւն սպասանելիս՝ բոլորովին կորցնում է ինքն իրան:

Ենապէս հապա խօյս պէտք է տալ այդպիսի հիւանդու զգացումներից:

ա. Հարկաւոր է բաւականաչափ բարի կամք.

բ. Առողջ գտառղութիւն և

գ. Հոգեկան արամազքութեան հաւասարակշռութիւն:

Սյս բոլորը կարելի է ձեռք բերել միայն կանոնաւոր դասախրակութեամբ, որի նպասակն է կարգի գնել հիւանդու զգացումները՝ առողջ մտապատկերների, խելացի մաքերի ու եռանդուն կամքի միջոցով:

Մի խօսքով այն բոլոր միջոցներով, որոնց նպատակն է զարգացնել երեխայի բնաւորութիւնը և սովորեցնել քաջապէս յաղթել կեանքի մէջ սպասանող անյաջողութիւններին ու վշտերին:

Դ.

«Կրգութեան բոլոր զաղանքն այն է, ասում է մոռւսան, որ խելքի ու մարմնի զործունեութիւնն միմեանց փոխազարծ հանդսառութեան ծառայեն:»

Պէտք է խոստովանել, որ մենք այդ բանում՝
շատ յետ ենք մնացել:

Մեզ սովորեցրել են գովրոցը համարել ոչ իր-
քե մի հասարակական հիմնարկութիւն մեր երե-
խաների համար, այլ իրքե մի անհրաժեշտ տեղ, ուր
պէտք է որոշ ասքիներ շարունակ յաճախել մեր
ուսումը ցոյց տուող զանազան վկայականներ ձեռք
բերելու համար:

Իսկ այդ վկայականները պէտք են գալիս մեզ
սկսած առ ու հասարակական ծառայութիւնների
մէջ՝ ցոյց տալու մեր իրաւունքներն ու արժանա-
ւորութիւնները:

Երկրորդ՝ աշխատելով մեզ համար այս կամ՝
այն վկայականը սատանալու՝ մասանում ենք, որ մեր
երեխաների թէ օգտի համար և թէ կեանքի այս
կամ՝ այն ասպարիզում՝ յաջող ծառայութեան հա-
մար անհրաժեշտ է ոչ թէ միայն ընդհանուր կամ՝
մասնագիտական ուսումն, այլ և բազմակողմանի
հոգեկան ու ֆիզիքական զարգացումն:

Թող մեղնից ամէն մէկը Անգլիացու նման
մտածէ, որ որդուն գովրոց է, ուզարկում բարեկիրթ
մարդ դառնալու և ոչ թէ ու սման աւարտման
վկայական սատանալու համար:

Սրեմաքում ֆիզիքական կրթութեան հարցը
վաղուց արգէն առաջին տեղն է բոնում. իսկ մեզ
մօտ համեմատաբար ոչինչ չկայ:

Մէծ սխալ արած կրլիենք, եթէ ֆիզիքական
կրթութեան բոլոր պատասխանառուութիւնը միայն
գովրոցի վերայ բարձենք. հասարակութիւնն ինքն

պիտի ստանձնէ այս գործը իւր որդոց և իւր երկրի շահի համար:

Միայն անչափահաս ժողովուրդն է կարօտում ուրիշի օգնութեան, ինչպէս անչափահաս մանուկը՝ իւր դայեակի անընդհատ պաշտպանութեան:

Բայց նախ մանրամասն քննենք, թէ կանոնաւոր ֆիզիքական կրթութիւն ասելով՝ ի՞նչ ենք հասկանում:

Ամենից առաջ պէտք է հոգանք, որ մեր երեխաները մինչև զպրոց մանելը, իրենց ծնուելու օրից սկսած, ստանան կանոնաւոր ֆիզիքական կրթութիւն, այսինքն՝ նրանք կրթուեն բանիմաց մարդկանց անընդհատ հսկողութեան տակ և այդ նպատակին հասնեն խելացի միջոցներով:

Սորտ համար հարկաւոր է, որ հասարակութիւնը ինքը հասկացողութիւն ունենայ թէ երեխաներին առաջին տարիներում ինչպէս պէտք է խնամել:

Մեր հոգեոր զպրոցների վերջին դասարաններում մանկավարժութիւն են անցնում:

Ցանկալի էր՝ որ աւելի մեծ տեղ տրուեր երեխաների ֆիզիքական կրթութեան հարցին, և այդ կարեոր խողը զասընթացը յանձնուեր մասնագետ բժշկի, և որքան կարելի է զործնական լինել այդ դասընթացը. իսկ չունեորների որդոց կրթութեան վերաբերութեամբ—որոնց ծնողները ոչ նիւթական կարողութիւն ունին, ոչ ժամանակ և ոչ անհրաժեշտ հասկացողութիւն՝ թէ պէտք է կանոնաւորապէս



կրթել զաւակների, հասարակական նախաձեռնութիւնը մեծամեծ օգուտներ կարող է տալ:

Յանկալի է շատ մանկանոցներ, մանկական պարտեզներ և ուրիշ ապաստարաններ բացուին չունեոր մանուկներին խնամելու համար՝ մինչեւ նրանց տարրական դպրոց մտնելը:

Դիտենք՝ որ մեր ինտելիգենտ և ապահով շրջանների բազմաթիւ կրթուած կանայք ձանձրանում են գասարկ և աննպատակ կեանքից:

Որքան վսէմ գործունեութեան ասպարեզ է քոյցվում նրանց առաջ մեր ժողովրդեան կրթութեան ծառայելու:

Հենց որ երեխան դպրոց է մանում սկըսվում է նրա ուսումը. բայց դրանով նորա ֆիզիքական կրթութիւնը չի վերջանում:

« Փոքրիկ երեխաններ — քիչ հոգս, մեծ երեխաններ — շատ հոգս», ասում է ժողովուրդը:

Եւ ճշմարիտ, որչափ որ երեխան մեծանայ և խելքն արագութեամբ զարգանայ, որքան որ ընկերակիցների շրջանն ընդարձակուի, այնքան ել աչալուրջ հսկողութիւն պէտք է նորա ֆիզիքական զարգացման ու առողջապահութեան նկատմամբ:

Շատ անդամ վպրոցի վարչութեանն են մեզայրում, որ նա իւր սանիկներին որոշ ուսում տալիք՝ բարոյապէս ու ֆիզիքապէս չէ կրթում:

Տեսնենք թէ որքան Ճիշտ է այդ մեզայրանքը:

Ըստ երեցիթին մեր վպրոցները շատ դորձկարող են կտասարել բայց միայն որտեղ որ կան յարմար բնակարտներ, ընդարձակ զաւիթներ, ստուերա-

խիտ պարտէղներ, մանրամարզութեան սրահներ, ձմեռուայ ու ամառուայ եղանակներին յարմար խաղալու աեղեր, ծօճաններ, լողարաններ, ձմեռը սլալու աեղեր. որոնց կ'աւելացնէինք և աշակերտական երգեցիկ և երաժշտական խմբեր և երբեմն էլ թարոններ:

Այս բոլոր յարմարութիւններն ունենալով՝ զպրոցը երբեք չի հրաժարուիլ իւր սաներին ընդհանուր կրթութիւն աալուց:

Մեր զպրոցների անկանոն ֆիզիքական կրթութեան երկրորդ պատճառն այն է, որ ֆիզիքական կրթութեան հոգատարութիւնը ոչ թէ միայն մանկավարժական, այլ և բժշկական — առողջապահութեան աեսակետով է պահանջվում:

Իսկ այդ մասնագիտութեան միակ ներկայացուցչել զպրոցի բժշկի զործունեութիւնը՝ բժշկական խորհուրդներ, հիւանդ աշակերտին առաջին օգնութիւն տալով է սահմանափակվում:

Հենց այդ պատճառով մենք ու բժիշկներն իրար չենք հասկանում:

Ի՞նչ կարող է անել մասնաւոր մարդու կամ հասարակութեան նախաձեռնութիւնը մեր երեխաների ֆիզիքական զարգացման նպաստելու զործում:

Արեւուաքի, մանաւանդ Անդիհայի օրինակը մեղցոյց է տալիս, որ հասարակութիւնն ամենից առաջ հոգս պիտի առնել թէ մեծերի և թէ փոքրների համար տեղական խաղեր ու մարզութիւններ կաղմակերպելու:

Եթէ մեր զպրոցներն անկարող են իրենց բակերում կամ պարտէզներում այդ բանը սարքելը այն ժամանակ քաղաքը կամ զիւղը, նոյն խսկ մասնաւոր անհատներ պարտաւոր են իրենց այդիներըն ու ծառուղիները ծառայեցնել հասարակական խաղերի համար և միանդամայն ձեռք բերել խաղի համար անհրաժեշտ պիտոյքներ:

Արտասահմանում զպրոցի ուսուցիչները սովորաբար անվարձ են աւանդում այդ տեսակ խաղերը:

Մեղ մօտ երեխ հարկաւոր կրլինի յարմար անձնաւորութիւններ վարձել, որպէս զի խաղի նշանակած ժամին անպատճառ ներկայ լինին:

Այս հիմնարկութեան տարեկան ծախսը կորող էին հոգալ թէ քաղաքային վարչութիւնները և թէ այդ զործով հետաքրքրուող անձնաւորութիւններ ու բնկերութիւններ:

Ցանկալի էր նոյնպէս որ ծնողներն առանձին խմբակներ հիմնէին, որոնց նպաստկը լիներ մանկական խաղեր և ուրիշ բացօգենայ ֆիզիքական վարժութիւններ տարածելը:

գ. Մանկական խաղեր կազմակերպելու հետ մի հարց է միանում; թէ արդեօք զպրոցյաճախող երեխաներն օրուայ որ ժամերին կարող են զբաղուել խաղերով:

Նախակրդական զպրոցների աշակերտները, որ պարապում են 9 ժամից մինչև 3-ը և երբեմն էլ մինչեւ չորսը զրկուած կրլինին այդ բաւականութիւնից, որովհետեւ ձմեռը հիւսիսում օրը շուտ է մըմ-

Դառն մինչեւ աշակերտաներն իրանց ճաշերը վերջացնում են, մուժն արդէն ընկնում է:

Յանուն բժշկական ու մանկավարժական հիմնեքների մենք բողոքում ենք այդ վարժունքի գէմի որ աշակերտաներին այնքան երկար ժամանակ անընդհատ պահում են դաստրանում, որովհետեւ 5 կամ 10 րոպէ դասամիջոցները չեն կարող նրա ամբողջ ժամանայ մնաւոր լարուած աշխատութեան հանդիսաւ տալ:

Գերմանիայում արդէն ձայներ են բարձրանում, որ առաջին 5 դասարանի դասերը, որ միայն 45 րոպէ են տեսում, աւելի կարճացնեն և շաբաթական դասերի թիւն էլ քայցնեն, որպէս զի երեխաներն աւելի ժամանակ ունենան խաղալու և ֆիզիքական վարժութիւններ անելու:

Դրանից չի կրծառուի դպրոցի ծրագիրը, ընդհակառակը՝ մենք համոզուած ենք, որ մի և նոյն ծրագիրն աւելի յաջող կարող են անցնել, եթէ ժամանակ նուիրենք երեխաների ֆիզիքական ոյժը զարգացնելու:

Ամենօրեայ դասերի թիւը միայն 4-ով սահմանափակելով՝ չաշուած դասամիջոցների 10 րոպէն, մենք աշակերտաներին կազատենք մ.ծ դասամիջոցից:

Ժամը մէկին վերջացնելով իրանց դպրոցական զբաղմունքները՝ աշակերտաները ժամանակ կունենան տանը ճաշելու և այնուհետեւ ժամը երկուսից մինչեւ չորսը խաղերին մասնակցելու:

Եթէ մենք յօդուա ֆիզիքական դասամիարա-

կութեան զո՞նենք ձեռք բերելու գիտութեան մի
մասը, այն ժամանակ կունենանք առողջակազմ պա-
տանիներ, ապազոյի լաւ գործիներ:

Որովհետեւ, ինչպէս աւեաարանք առում է,
«ինչ օգուտ մարդուն, Եթէ նա բոլոր աշխարհին
աիրէ և իւր հոգուն պնասէ»:

Նոյնպէս և ինչ օգուտ երիտասարդին, եթէ
ձեռք բերէ շատ զիտութիւններ, իսկ իւր մարմնի
առողջութիւնն ընդմիշտ կործանէ:

Դպրոցական պարապմունքների ժամանակը
կրծատելը ի հարկէ մեր իրաւունքի տակ չէ և հա-
սարակական նախաձեռնութիւնն էլ այդ գործում
շատ թոյլ նշանակութիւն ունի:

Ինչ վերաբերվում է մասնաւոր դպրոցներին,
ցանկալի է, որ նրանք օր տուած հոգ տանեն մա-
տաղ սերունդի ֆիզիքական կրթութեան, որչափ
որ այդ իրանցից կախուած կրլինի:

Ե.

Որպէս զի մեզ հետաքրքրուող այս խնդրի մա-
սին մեր ասելիքը վերջացնենք, մնում է յիշել և մի
քանի ուրիշ միջոցներ, որ դպրոցը իւր սաներին
բազմակողմանի կրթութիւն տալու համար կարող
է գործազրել:

Այդ միջոցներն են. բուսաբանական պարտէզ-
ներ տնկել որտեղ բոլոր աշխատանքներն աշակերտ-
ները կատարեն, իրենց ուսուցչի ղեկավարութեամբ
արհեստանոցներ, որտեղ վատ եղանակներին աշա-

կերանները խաղի փոխարէն զբազուին պարզ արհեստներով. քաղաքից գուրս ման գալ, երբ աշակերտները կարող են իրենց համար խաղերի մրցութիւններ սարքել. մարմնամարզական փորձեր և ուրիշ մանկական տօներ, վերջապէս պարի գասեր շարաթական մեկ կամ երկու անդամ:

Մեր աշակերտների ֆիզիքական կրթութեան ամենակարեոր հարցերից մեկն էլ այս է, թէ ամառուայ արձակուրդներն որաեղ և ի՞նչպէս են անցկանում:

Փոքր ի շատէ նիւթական միջոց ունեցողներն ամառը զիւղ կամ ամսարանոց են դնում, բայց մեծամասնութիւնը մնում է փոշոտ ու խեղզիչ օգովքաղաքում, թափառելով աւելի ևս փոշոտ պարտէցներում ու ծառուղիներում:

Պատանիների այսպիսի անբնական վիճակի վերայ ուշագրութիւն է դարձրել ոչ միայն հասարակութիւնն, այլ և կառավարութիւնը:

Պետերբուրգում, Մոսկվայում և ուրիշ մեծքաղաքներում աշակերտական ամսառուայ գաղութներ ու գպրոցական ամսարանոցներ հիմնելու փորձեր արին:

Բայց նրանցից շատերն միայն շահասիրական նպատակների հետեւելով՝ շատ քիչ էին համապատասխանում իրենց բուն կոչման և շատ բարձր թոշակ (ամեն մի աշակերտից 300 բուբլիկից աւելի) պահանջելով, անմատչելի դարձան ընդհանուրին:

Այդ պատճառով դարձեալ դիմում ենք մասնաւոր ու հասարակական նախաձեռնութեան որ

այդպիսի հիմնարկութիւններ հաստատելու հոգու տանեն:

Սյա տեսակետով շատ նպատակայարմար ենք համարում մեր ներսիսեան դպրանոցի նախաձեռնած ամսութայ աշակերտական ճանապարհորդութիւնները:

Այդ ձեռնարկութիւնն աւելի նպատակայարմար է, քան զիշերօթիկ աշակերտներին մի ամսանոցում փակելը:

Ինչքան զուարձութիւն է քաղաքի մանուկի համար զիւղեց զիւղ ոտքով ման զալ, երկրի զեղեցիկ բնութիւնը զիտել իւր ծննդավայրի հնութիւններն ու նորութիւնները աչքով տեսնել և այլն և այլն....

Յանկալի է որ մեր միւս գողրանոցներն ես այդ զեղեցիկ օրինակին հետեւն:

○.

Վերջին ժամանակներս շատ քաղաքներ ու հասարակական հիմնարկութիւններ՝ հասկանալով խաղերի օգտակար ու վերին աստիճանի անհրաժեշտ լինելը, զանազան հրապարակների վերայ տեղեր են նշանակում, ցանկապատում և այդ տեղերում քաղաքի երեխանների համար խաղեր են սարքում:

Դատ տեղ էլ մանկական խաղեր սարքում են քաղաքային պարտէզներում, խաղերի և մարմարզարդութեան համար զանազան յարմարութիւններ պատրաստելով:

Խաղերը վերին աստիճանի հարկաւոր են նայելով այժմեան կեանքի պայմաններին:

Քաղաքի երեխաները մեծ մասամբ զրկուած են ֆիզիքական կրթութիւնից:

Դպրոցներն էլ ոչ միայն հողս չեն տանում մատուկ սերունդի ֆիզիքական կրթութեան, այլ և ընդհակառակը՝ քայքայում են նրանց առողջութիւնըն ենթարկելով չափազանց ծանր մտաւոր պարագմունքների:

Այս բոլորը վաղուց յայտնի է հասարակութեան և նոյն իսկ ծնողներին, վաղուց այդ մասին խօսում է մամուլը՝ և շարունակում է խօսել մինչև այժմ:

Բայց ինչպէս յայտնի է, խօսքի ու գործի մեջ մեծ տարածութիւն կայ, և մամուլի առաջարկութիւններն ու գատաղութիւնները կեանքի մեջ բաւական դժուար են իրազործվում:

Ենուամենայնիւ ինտելիգենցիան պէտքէ շարունակէ արծարծել այդ խնդիրը, որպէս զի ապագայ սերունդը ֆիզիքապէս այլասեռուելուց ազատուի:

I;

Բայց սխալ կրլինի կարծել թէ երեխաների մանկական խաղերը նորահաս կազմուածքի միմիայն ֆիզիքական կրթութեան համար են:

Ամենեին ոչ:

Խաղերն ոչ նուազ ներգործութիւն ունին նաև մանուկի մտաւոր բարոյական կրթութեան վերայ:

Խաղերի հրապարակում՝ երեխաները ստանում՝
են նաև բարոյական կրթութիւն և ապացոյց կա-
րող են լինել Պետերբուրգում սարքուող խա-
ղերը:

Քաղաքի հրապարակներից մեկում շաբաթա-
կան 5 անդամ ձրիաբար սարքվում են մանկական
խաղեր, որ ամենքի համար էլ մատչելի են:

Այնաեղ յաճախում են ինչպէս ինտելիգենտ ու
հարուստ զասակարդի զաւակներ, նոյնպէս էլ չքա-
ռոր և մինչև անդամ փողոցային երեխաներ:

Սկզբում այս վերջինները խաղահրապարակից
դուրս մեծանալով առանց հսկողութեան՝ խաղի մէջ
էլ մտցնում են իրանց սովորական յատկութիւններն.
այսինքն՝ յանդզնութիւն, մինչև իսկ կոպտութիւն,
անհնազանդութիւն, հայհոյանք և կոիւ:

Բայց մի քանի շաբաթ անցնելուց յետոյ այդ
միևնույն աղայզոց չեր կարելի ճանաչել. նրանք դառ-
նում՝ էին զիջող հնազանդ, քաղաքավարի և որ
զիստաւորն է աշխատում էին իրանց դսպել որ չը-
հայհոյեն ու չկուռեն:

Մի խօսքով կարծ ժամանակամիջոցում այն-
պիսի հիանալի կարգապահութիւն է աիրում, որ
ամեն մի դպրոց կարող է նախանձել:

Եւ պէտք է ասել, որ այդ կարգապահութիւ-
նը բռնութեամբ կամ ճնշելով առաջ չի դալիս:

Պատիմներից միայն մէկն է ընդունուած. այն
է որ եթէ երեխան անհոգութեամբ վերաբերուի
իւր խաղալիքներին, իսկոյն նրա ձեռքից առ-
նում են:

Ուրիշ անգամ՝ նա կաշխատի խաղալիքներն աւելի լաւ պահպանել:

Եթէ աղան կամ՝ աղջիկը յամառին, իսկոյն յանդիմանվում են, որ իրանց լաւ չեն պահում, ուստի՝ եթէ միւս անգամ էլ այդպիսի բան նկատեն, հրապարակից առժամանակ կամ՝ բոլորովին կը հեռացնեն:

Ամբողջ ամառը հրապարակից հեռացնելու երկու կամ երեք դեպք է եղել:

Շատ տեսակ թիւրիմացութիւններ կարելի եր սպասել այդքան բազմաթիւ երեխանների ժողովից, ուր լինում են երկու, երեք, չորս հարիւր երեխաններ:

Բայց հենց իրանք խաղերը հիանալի կարգ ու կանոն պահպանելու միջոց են տալիս:

Առաջնորդները ամենալաւ մանկավարժական կանոններով հսկում են, որ և շատ է նպաստում խաղերի կանոնաւոր ընթացքին:

Այդ մանկավարժական կանոններից զլխաւորն այն է, որ իմանում են երեխանների հետ վարուելու ու նրանց զբաղեցնելու ձեր:

Երբ երեխանները զբաղուած են խաղով կամ զործով, երբէք չարութիւն չեն անում:

Վերջին ժամանակները խաղեր սարքող օրիորդների ու երեխանների մէջ այնպիսի սերտ բարոյական կապ հաստատուեցաւ, որ վերջիններս նրանց զիմելիս ամենաքնքոյշ բառեր էին զործածում. օրինակ՝ սիրելիս, քաղցրիկս, հոգեակս և այլն....:

Բ.

Մատաւոր աշխատանքից հանդստանալու ամենալաւ միջոցը՝ ֆիզիքական խաղերն են թէ տղային, և թէ երիտասարդի համար. որովհետեւ միմիայն խաղով կարելի է ամենազօրեղ, ամենահարկաւոր շարժումներ տալ մարմնին:

Եյդ շարժումների ժամանակ զրեթէ բոլոր մկանունքները քիչ թէ շատ գործունեութեան մէջ են մտնում. ինչպէս տեսնում ենք օրինակ՝ անզլիական գնդակախաղի ժամանակ:

Եյստեղ ամեն բան արագութեամբ են կատարվում, ձգում, վազում, խփում, բռնում և այլն. և այս բոլոր կենդանի շարժողութիւնների շնորհիւ արեան շրջանառութիւնն էլ նոյնպէս սաստիկ արագութեամբ է կատարվում:

Նրանով ոչ միայն շնչառութիւնն է զօրեղանում, այլ և թոքերից աւելի ներքեւ զանուող գործարաններն առողջարար ցնցումն են ստանում, որ նպաստում է մարսողութեանը և ախորժակի բացման:

Ուրիշ ոչ մի ֆիզիքական վարժութիւնով, ոչ զրօսանքով, ոչ մարմնամարզութեամբ կարելի չէ այդպիսի շարժումներ անել:

Նրա հետեանքն այն է լինում, որ խաղը երեխային ուրախ զուարժ արամազրութիւն տալով նեարգային համակարգութեան ևս ընդհանուր աշխուժութիւն է տալիս:

Կրկարձէք թէ մեր առողջութեան մի և նոյն

չափով օդուտ տուած կլինինք, թէ ամէն օր յետ
ու առաջ քայլենք մի չորս կիլոմետր տարածու-
թիւն փակ բնակարանում և եթէ նոյնչափ մանդալով՝
զրօննենք գեղեցիկ տեղերում; հետաներս ունենալով
և մի լու խօսակից բարեկամ:

Մի և նոյն բանն է և մանկական խաղը:

Սորա պէս կայտառացնող ու թարմացնող ներ-
գործութիւն կարող չէ ունենալ և ոչ մի ֆիզիքա-
կան վարժութիւն:

Մարմնամարզութիւնը առհասարակ զինուո-
րական բնաւորութիւն է կրում: բայց ամենն ին նման
չէ հին Յունաստանի ըմբշամարտութիւններին:

Մեր մարմնամարզութիւններն ամենեին չեն
ձգում այն նպատակին, ինչի որ ձգում են Անգլիա-
յում երիտասարդական խաղերն, որոնք և ժամա-
մանակ անցկացնելու ամենալաւ միջոց են:

Այս խաղերից առաջ եկած ուրախութիւնն ու
առողջարար շարժումները զպրոցի համար ևս մեծ
բարիք են, որովհետեւ նրանց շնորհիւ աշակերտը
մարմնով ու հոգով գառնում է առոյգ, որ շատ մեծ
նշանակութիւն ունի:

Առոյգ աշակերտաների հետ պարապելով՝ հեշ-
տութեամբ կարող ենք մեր նպատակին հաս-
նել. այն ինչ եթէ զործ ունենանք զունաս, կար-
ծես քնոտ, թմրած աշակերտի հետ, պարզ բան է,
որ շատ քիչ յառաջադիմութիւն կր առնենքներ:

Երիտասարդական խաղերը զարձեալ մեծամեծ
օգուտաներ են տալիս Անգլիային. խաղերն ամենալաւ
կրթողական միջոց են ճանաչուած՝ պատանինե-

քի բնաւորութիւնը կանոնաւորելու վերաբերմամբ։
Նրանց առաջին զործն է լինում հիանալի կերպով մշակել պատահու մեջ հաստատ բնաւորութիւն ու համբերութիւն, յատկութիւններ՝ որոնցով նա զինուորուած կեանք է մանում։

Հենց այդ խաղերն են, որ տալիս են անզլիսցուն հաստատ բնաւորութիւն ու կամքի ոյժ, որոնք կարելի է առել ոսկեայ պատուզներ են տուել և այժմ էլ տալիս են ամբողջ երկրին։

Բայց այդ՝ խաղերն զօրացնում են և այսպիսի յատկութիւններ՝ լուրջ ուշագրութիւն, նրբամիտ հայեացք, վճռականութիւն անընդհատ վարժուելու և այլն։

Խաղի միջոցով միւս մանկական պակասութիւններն առելի հեշտութեամբ հարթվում անհետանում են, քան թէ կրթելու մի որ և է այլ եղանակով։

(Ճ.)

Անզլիական կրթութեան ամենազլիսաւոր տարերքներից մեկը խաղերն ու մարզութիւններն են կազմում։

Խաղի հրապարակի վերայ աշակերտներն ու ուսուցիչներն առելի հեշտութեամբ են սովորում փոխադարձաբար իրար հասկանալ, ու հաւատագլ և նրանց յարաբերութիւնները առելի արդար ու սերտ են գտանում։

Երիտասարդական որ և է խաղ կամ ուրիշ ֆե-

զեքական վարժութիւն մարդուս առցգ ու թարմ
է պահում:

Սնդլիայում հազուադէպ են անժամանակ մա-
հեր, սակաւ են մաղձոտ մարդիկ, դունատ դէմքեր,
դէր մարմին, ինչպէս օրինակ մեզանում. այնտեղ
մարդիկ առհասարակ աւելի ուժեղ մսու և ա-
ռողջ են:

Խաղերը բացի առողջարար ազգեցութիւն դոր-
ծելուց՝ ունին նաև Սնդլիայում հասարակական մեծ
նշանակութիւն:

Երիտասարդական խաղերի ու նրանցից առաջ
եկած համերաշխութեան շնորհիւ Սնդլիական հա-
մալսարաններում կազմուած են բազմաթիւ ընկե-
րութիւններ, որոնց շարունակում են մասնակցել
մարդիկ մինչև իրանց ծերութեան հասակը:

Սնդլիայի ուսանողները ժամանակ անցկացնե-
լու համար խաղի ու ճառախօսութեան համար
կլուներ ունին, որոնք մեծ աշխոյժ ու առողջա-
րար զուարձութիւն են սպատճառում նրանց:

Սյդ երիտասարդական խաղերն, ինչպէս ա-
սում են՝ Սնդլիայի միջին գասակարգի մարդկանց
կեանքի համար էլ նոյն հասարակական նշանակու-
թիւնն ունին:

Մարդիկ բոլորովին տարբեր լինելով միմիան-
ցից թէ կոչումով և թէ կրթութեամբ՝ շփումը են
իրար հետ իրանց կլուներում և սովորում են ի-
րար հասկանալ ու զնահատել:

Երիտասարդական խաղերը նոյնպէս ծառայում
են Սնդլիայում իրեւ գեղեցիկ միջոց երկու սե-

ու ազատ ու մաքուր յարաբերութիւն կապելուն:
Հենց այդ բանի համար ամենայարմար խաղն է
վերջին ժամանակներս տարտածուած լառն ովենիս կո-
չուած խաղը:

Անզլիայի տիկինն երևան է գալի խաղի հրա-
պարակի վերայ իւր ֆլանելի պարզ շրով. նա ին-
քը ինութեամբ մաքրութիւն է ու զուարձութիւն.
Նա զիտէ, թէ ինչպէս պէտք է վարուել խաղի ժա-
մանակ երիտասարդ տղամարդկանց հետ:

Խաղի միջոցին երիտասարդի հետ վարվում է
բոլորովին ազատ և միւնոյն ժամանակ անմեղ վա-
յելութեամբ:

Դիտեցէք վերջապէս Անզլիացիներին իրանց
հայրենիքից դուրս տեսէք թէ խաղի կլուքը ինչ-
պիսի մի գեղեցիկ հասարակական կապ է նրանց
համար:

Անզլիացիներն որտեղ էլ պատահեն միմեանց
խաղերն ու սպորտն իսկոյն միացնում է նրանց:

Այսպէս օրինակ օտարութեան մէջ անդամ ի-
րանց զնդակով ու +ընէպոն+ Անզլիա են ստեղծում:

Շատ կարելի է որ երիտասարդական խաղերն
մի քանի չափազանցութիւններ ևս ունին:

Բայց այդ չափազանցութիւններերը խաղի յատ-
կութեան հետ որ և է կապ չունին:

Յայտնի բան է ամեն զործի մէջ էլ պէտք է
չափաւորութիւն լինի:

Այս ամենն ի նկատի առնելով, պէտք է խօս-
ուովանենք թէ առհասարակ Անզլիական կրթու-
թիւնն խաղերի միջոցով մէծ զանձ է պատրաստում

իւր ապագայի համար իւր երկու սեռի մասաղ սերնդին կայտառութիւն ու աշխոյժ կեանք պարզեւելով՝ նա լու ապագայ է խօսանում նրանց:

Բայց եթէ այս ամենը զիանք, ինչու մի այդպիսի բան մեղանում ևս չենք ստեղծում:

Այս, ինչու մենք էլ նոյնը չենք անում:

Ես միայն կը ցանկայի, որ մեղանում ևս առաջնարար Փիզիքական խաղեր մանեին, մի և նոյն է թէ ինչ կը լինին, միայն թէ արագ շարժումներ պահանջեին:

Ես այժմ էլ մեծ բաւականութեամբ մատրերում եմ թէ ինչպէս մանուկ հասակումն ամբողջ ժամերով զանազան խաղեր էինք խաղում Ախալցխայի լայն փողոցներում; ինչպէս երբեմն մեծ խմբերով մարդեր էինք զնում և ամբողջ կէս օրը գեղեցիկ խաղերով զուարձանում: խաղում էինք թօփ (զնգակ), շղաշափիկ (թիֆլիսի չելիք-աճոխի), աղդարմայ, խակ ձեռը ձնթօփ, հարսնկուլ:

Առ հասարակ զնգակը ձշմարիս որ մի անդնահատելի բան է, նրանով կարելի է ուրիշ շատ հետաքրքրական խաղեր հնարել:

Դպրոցում խաղեր մացնելու համար զանազան արդելքներ՝ զլիսաւորապէս ծախսեր, կարող են առաջ գալ այդ բանում կարող է պեսութեան օդնել թէ հասարակութեան և թէ մասնաւոր անձանց նախաձեռնութիւնը:

Այժմ ամէն մի զպրոց գահին ունի:

Ցանկալի է որ խաղի համար պարտէղ ու հրապարակ ևս լինին:

Ուրեմն բոլոր ուժով հոգս տանենք, որ մեր որդիքն ու թռները ուժեղ ու կայտու մեծանան. իսկ այսպէս մեծանալ կարող են միմիայն վերոյիշեալ ապայմաններում:

Ինչպէս տասցինք այդ նպատակին հասնելու համար միակ միջոցն խաղերն են, ուստի տեսն կերպ դորձակցենք, որ տարածուին և համոզաւած լինենք թէ այդ բանով մի հանրօգուտ դործ ենք կատարում, որովհետեւ ծառայում ենք մասալ սերնդի առողջութիւնը պահպանելուն:

Ճ.

Մաքուր օղը կենդանացնում, նորոգումէ մեր արիւնը, միենոյն ժամանակ կենդանացնումէ մեր ողջ մարմինը, տալիս է նորան առողջութիւն և ոյժ՝ մի խօսքով առողջ կենք. այն ինչ անմաքուր օղը թուլացնումէ մարդուս և սարսափելի հիւանդութեան ենթարկումն նրան, ինչպէս շատ անդամ տեսնում ենք մեր այժմեան մանկանոյներում. օրինակ. ծծկեր երեխանների արեան ստատիկ պակասութիւն, դպրոցային նոււազ արիւնութիւն, ջերմ, զլիացաւ, թռքախտ և այլն. վերջապէս ամենքին լաւ յայտնի է որ մարդս կարող է բոլորովին խեղդուել անմաքուր օդում, ինչպէս ձուկը անմաքուր ջրի մէջ:

Մի ամերիկացի առողջաբան հաշուել է, թէ անմաքուր օդից քանի մարդ է մեռնում:

Բանից գուրս է զալիս, թէ 100 մեռնողից առ-

նուազը քառասուն հոգի անմաքուր օղից են մեռնում: Եւ այս միմիայն այն պատճառով, որ մարդ անհոգ է օղի մաքրութեան վերաբերութեամբ. մի բան՝ որ առատօրէն ձրիաբար բնութիւնը տալիս է, բայց մարդս տնտես է անում և չի ուզում, ինչ պէս պէտք է օղուա քաղել:

Թէ որքան անհրժեշտ է լոյսի ազգեցութիւնը կենդանիների կազմուածքի զարգացման նկատմամբ այդ հաստատելու համար աւելորդ չենք համարում հետեւալ փաստերն այստեղ բերել:

Բժիշկ Ֆ. Էպուարս զեռ 1824 թուին մի քանի փորձերով ցոյց տուեց, որ թափանցիկ ամսնի մէջ պահուած դորտի բոլոր ձուիկներից ձաղերը դուրս եկան, այն ինչ այն ձուիկները՝ որոնք պատուած էին անթափանցիկ մութ առնանի մէջ, թէև միենոյն պայմաններում, շատ մեծ քանակութեամբ փչացան և նրանցից միայն մի քանիսի սաղմբ զարգացու:

Կենառւնակութեան այս բնորչանուր օրէնքներն ի հարկէ պէտք է ՚ի նկատի ունենալ և երեխայի ֆիզիքական կրթութեան ժամանակ:

Ո՞վ չզիտէ որ բնութիւնը բոյսերի ու կենդանիների ամենազօրեղ զիազարներ տալիս է մեզ այնտեղերում, ուր արեգակն աւելի պայծառ է փայլում և որաեղ ամառը երկար է լինում, օրինակ արեւագարձային երկիրներում:

Ո՞վ չէ իմանում, որ հիւսիսային բնութիւնն արեով աղքատ լինելով՝ աղքատ է առհասարակ քոյսերով և կենդանիներով:

Ա՞վ չէ խմանում, որ հարաւից հիւսիս տեղա-
փոխուած բոյսերն ու կենդանիները կարճ ժամանա-
կում կամ բոլորովին ոչնանում են, կամ այլաւեր-
վում, նիհար սերունդ ունենում, համարեա ծնողնե-
րին աննման:

Եյն կազմուածքները, որոնք իրանց յարմարու-
թիւններով կարող են իրենց զոյութիւնը պահպա-
նել և հիւսիսային և հարաւային կողմերում, որ-
քան շատ են կորցնում առաջին տեղում՝ ապրելով և
որքան շատ են շահվում վերջին տեղը փոխուելով:

Բոլոր ձանապարհորդների նկարագրութիւնները
ցոյց են առաջիս, թէ հարաւային բնակիչների տ-
հազին մեծամասնութիւնն առողջ, զեղեցկակազմ՝ ու
բարձրահասակ է. իսկ հիւսիսում բնակուողները
վտիտ թոյլ ու կարձանասակ են, ինչպէս էսկիմոս-
ները և այլն:

Նայեցէք բոնարեկեալների երեսներին, որոնք
զըկուած են բաւարար օղից և լոյսից, նայեցէք զա-
նազան կանաորներում ծառայողներին, որոնք անդա-
գար աշխատում են կիսասութ և աղմկալից տեղե-
րում. սոքա ամենքն էլ ինչպէս զունատ են, ան-
արիւն, կնձոռա, զժզո՞ ու հիւսնպոտ զէմքով:

Եթէ այսափ վատ է աղգում լոյսի և օղի
պակասութիւնը հասակաւոր մարդկանց վրայ, ո-
րոնց կազմուածքն արգէն ամրացել է, երեակայեցէք
թէ ինչ տեսակ աղգեցութիւն կարող է ունենալ
օղի և լոյսի պակասութիւնը այն թոյլ ինքն ըստ
ինքեան տկար արարածների վրայ, որոնք գեռ նոր
են զարգանալ սկսում:

Դիտողութիւնները ցոյց են ապիս, որ իջախտ, անզլիական հիւսնդութիւն, ցինդա, թռքախտ, նեարդային զանտղան խանդարմունք՝ վաս օգի և նուազ լոյսի մէջ մեծացած երեխանների մէջ սովորական երեոյթ են կազմում:

Ամեն մարդ տչքի առաջ պէտք է ունենայ այս ամենը և իւր երեխանների համար ընտրէ մուժ ու խեղզուկ օգով սենեակ:

Աղաս շարժմունքների կարեւորութիւնը զգացվումէ կեանքի հենց առաջին շաբաթից:

Երբ երեխան մեծանումէ բնական զրութեամբ՝ առանց խանձարուրի, նրա անկախ լինելու ընդունակութիւնն աւելի շուտ է զարգանում:

Հնդկացի և Մալայեցի երեխաններն, որոնց ծընուելու հենց առաջին օրից աղտա թողնում են շարժուելու և սողալու յասակի վերայ, սովորաբար վեց ամսից յետոյ կարողանում են արգէն առանց օգնութեան ման գոլ:

Իսկ եւրոպացոց ծծկեր երեխաններից խլում են մինչեւ անդամ այն, ինչ որ անհրաժեշտ է ամեն մի կենդանի արարածի զարգացման համար:

Եւրոպացիները համարեա ամբողջ ասրին շարունակ բարբարոսաբար երեխաններին պատելով խանձարուրներով, նորա աղատութիւնն են խլում:

Երբ երեխան մեծանումէ, մկանունքների շարժողութիւններն ել ստանում են կանոնաւոր հակում, բազմակողմնի ու ներդաշնակ զարգացում, և այս կատարվումէ հաճելի և գուրեկան, մանաւանդ երեխանների համար, խաղերով:

Խաշնարածները՝ որո՞ք կենդանիներ բազմացնելով են պարապում, շատ լաւ դիտեն, որ կենդանին մեծապէս կրթնառութիւնների վարժութիւնները սահմանափակ լինին:

Եթէ երեխաններ կրթելու մեր սովորուկան եղանակը զիտենք, կրտեսնենք որ գասահարակները սովորաբար արգելում են մանուկներին զանազան շարժումներ անելու:

Երբ երեխան զպրոց է մանում, իսկոյն նրան նստայնում էն:

Այդ րոստէից սկսում են իրենց զվարաւոր ու միակ ջանքը—միայն մատառը կրթութեան տալ մանուկին:

Իսկ նրա մարմնի զարգացման վերայ ուշադրութիւն անզամ չեն դարձնում:

Մարմնամարզութեան, առանց այն էլ սակաւաթիւ, զասերն այնպէս անցածքդ կերպով են կազմուած լինում և այնքան անկանոն են առանդվում, որ ոչ թէ օգուտ, այլ ընդհակառակը յոդնածութեան մի նոր պատճառ են դառնում:

Այժմեան կրթութեան վեասակար հետեանքը, որ միմիայն մատառի յետեից ընկնելով բոլորովին անուշադիր է թողնում ֆիզիքական զարգացումը, պարզ երեւումէ աշակերանների վերայ, զունաս գեղքեր, վաղաժամ ծերութիւն, շլութիւն, կղութիւն և այլ այսպիսի հիւանդութիւններ մեր զպրոցներին յատկանիշ են:

Քունքը մարմնի սմբողջ օրուայ աշխատանքից

յեաոյ հանգստութիւն տալու ամենալաւ ու անշրաժեշա միջոցն է:

Այս կերպով մարմինը նորից դորձելու ընդունակ է դառնում:

Նորուծին երեխաները սովորաբար օր ու զիշեր քնած են լինում; զարթնում են շատ կարճ ժամանակով, այն էլ քաղցածութիւնից սպիսուած, և կամ եթէ անցարմար են պատկած լինում:

Կէս տարուց յեաոյ երեխաները կարողանում են մի քանի ժամ անքուն մնալ, իսկ մի քանի տարեկան դառնալուց յեաոյ դարձեալ առելի քնում են, քան զրօնում:

Երկու երեք տարեկան երեխան ցերեկով մօտ երկու ժամ է քնում և երեկոյեան էլ վաղ է պահում; այնպէս որ ամբողջ օրուայ կէս մասը քնի մեջ է անցկացնում:

Չորս հինգ տարեկան երեխաները ցերեկով շատ սակաւ են քնում; բայց զիշերը 10—11 ժամը քնում են լինում:

Հետեւեալ տարիներում առելի քիչ են քնում, վերջապէս 12 տարեկան մանուկները 8—9 ժամուայ քնով կարող են բաւականանալ:

Որպէս զի քունը առելի հանդիսաւ լինի, անհրաժեշա է որ սենեկիը շատ տաք կամ սպազ կամ խոնաւ և սցըն չլինի:

Սու հասարակ մեր մարմնի առողջութեան համար պահանջվում է, որ փոքր հասակից ունենանք բաւական տաք բնակարան ու հագուստ, բաւարար ջուր՝ խմելու, լուսցուելու և ուրիշ ամէն տեսակ

մաքրութիւն պահպանելու համար. վերջապէս պէտք է բնակութեան համար լու և առողջարար աեղ ընտրել:

Ինչպէս աեսանք կանոնաւոր և առևնալու կեանք ունենալու զիսաւոր պայմանները բաւական մասշելի են դաստիարակների հասկացողութեան:

Ուրեմն մեղ մնումէ այժմ ցոյց տալ մի քանի ուրիշ պայմաններ, որոնք դաստիակախներից կախումն չունին, կամ թէ շատ սակաւ, բայց և այնպէս մատադ կազմուածքի զարգացման նկատմամբ մեծ նշանակութիւն ունին:

Ճ.Վ.

Ամենից առաջ պէտք խօսել ժառանգականութեան մասին:

Զուր ենք կարծում թէ մարդս ոշխառհն է զալիս չունենալով որ և է անցեալ, այլ միայն ներկայ. ի զուր նրան համարում ենք թղթի մի մաքուր թերթ, որի վերայ կարող ենք զրել ինչ որ կամենանք:

Ոչ մարդս իւր ծննդեան բոպէից հոգեսր կեանքի սերմերն իւր նախահայրերից է ստանում. և այս ժառանգականութեամբ:

Այս միջոցով որոշ յասկութիւններ ընդունակութիւն և հանձար սերնդից սերունդ են անցնում, իսկ երբեմն ամենքի մշց ցեղից ցեղ են փոխում սարսափելի հիւանդութիւններ. օրինակ՝ վերնոառութիւն, նեարդային զանազան ախտեր, ուշագնացութեան, մտաւոր ընդունակութեան խսնդարումն և այլն:

Ուրեմն մեր հոգին մինչև իւր զարդանալը «մաքուր թուղթ» չէ, այլ պահում է իւր մեջ նախահայրերից ժառանգած ամենահարկաւոր սպամեր:

Պարզ է, թէ ինչ ճանապարհով են անցնում երեխաներին ծնողների յատկութիւնները, ուստի և հասկանալի է, թէ ինչ աստիճանի կարեօր է, որ մարդս մեծ հոգացողութիւն ունենաց իւր անձի վերաբերմամբ՝ զիաննալով որ իւր մեջ է պարունակում ապագայ սերունդի զոյութեան ոյժը:

Ով որ այս մասին հոգս է տանում, այնպիսին սովորաբար բաղգաւոր և օրհնուած է լինում իւր սերունդի մեջ. ընդհակառակը՝ ով հոգս չէ տանում և ապարդիւն կերպով ցիր ու ցան է անումիւր հոգու և մարմնի ուժերը, այնպիսին բնութիւնից առմէնից առաջ է պատճվում, և յաջորդ սերունդն էլ անողորմաբար առւժումէ իւր նախահայրերի մեղքերի համար:

Ազի առաջ ունենալով այս տիներեւ ճշմարտութիւնները, զարմանալի չէ արդեօք որ ամեն մի քայլափոխում աեանում ենք թէ ինչպէս ծնողների մեծամասնութիւնը փոխանակ իրանց սերունդներին իսկական բարիք, այն է՝ հոգու և մարմնի առողջութիւն տալու, անխնայաբար քանզում են իրենց առողջութիւնը և աշխատումն իրենց որդոց երջանկութեան համար համեմատաբար չնչին բաներ—պէս պէս զարգարանքներ ու հարստութիւն թողնել:

Սյդպիսի ծնողներն 'ի հարկէ սերնդից սերունդ ամեցնումն են մի և նոյն յատկութիւններն ունեցող երեխաներ՝ հոգով ու մարմնով տիտր, ֆիզիքապէս

ու հոգեապէս հիւտնդ, իրանց անբովանգակ կեանքում՝
Ճշմարատապէս ուրախանալու անընդունակ:

Նրանց բանն ու զործը գառնում է լոկ սան-
ձարձակ զրօսանք, անսառակութիւն, գասարկախօսու-
թիւն, պարձէնկուառութիւն, փառասիրութիւն առանց
բնու զաղափար ունենալու բարձր, աղնիւ, զիանա-
կան ու բարոյական ճշմարտութիւնների մտախն, ո-
րոնք են խսպապէս մարդուս բարձրացնողը, նորա
կեանքին քաղցր ներզաշնակութիւն պարզեողը և
մի այնպիսի երջանկութիւն, որին հաւասար չ'կայ
երկրիս վերայ և ոչինչ:

Ինչպիսի՞ մեծ օգուտ բերած կրլինեին մարդ-
կութեան յաջորդ սերնդին մանկավարժներն ու ա-
ռողջաբանները, եթէ ուղղեին մարդոց կեանքն ու
բարքը դէպի լսուը, դէպի աղնիւը, մասակարարե-
լով նրանց կարեօր ու պատշաճ զիտութիւն:

Երկրորդ կարեօր պայմանը որ կրթութեան
վերայ նոյնպէս մեծ ազգեցութիւն ունի, զա շրր-
ջանն է, որի մէջ ապրում ու մեծանում է մարդս:

Սյժմ տեսնենք թէ մեր երեխաններն ինչպիսի
շրջանումն են կրթվում:

Մեր ժամանակի զարգացածների ասելով՝ մենք
ապրում ենք մի այնպիսի ժամանակում, որի նմանն
անցեալում երբեք չէ եղել:

Սյս ժամանակին որոշ տեսակետով կարելի է
երկաթէ դար անուանել:

Երկաթէ մեքենանները մինչեւ սյժմ ըլսուած
արագութեամբ և զարմանալի ճշմարտութեամբ կա-
տարում են ամենազժուար ու հիանալի զործեր. շո-

գենու ու շողեկառք մի տկնթարթում կարում անցնում էն ընդարձակածաւալ դաշտեր ու ովկեաններ:

Երկաթէ մարդակներով ու կամուրջներով անցնում էնք անդունդներ ու հովիաններ, բարձրադրուխ սարեր ու յաղթ ջրեր, հեռադրաթելի ցանցը, որ պատաժ երկրագունդս, մի տկնթարթում հազարաւոր վերստեր է կարում, կայծակի արագութեանի ամենակ է սփռում լոյս, մեր զօրքերի կատարելագործուած երկաթեայ զէնքերն ահ ու սարսափի կարող էն աղդել:

Մէնք մասամբ ուրախանում էնք, հրճվում էնք, թէ ինչ հսկայական քայլերով առաջ էնք ընթանում:

Բայց միանդամայն զիտենք և հակառակ կողմը:

Սրագասալց շողեկառքերն և կեանքի բարեկեցութիւնը զիւրացնող ուրիշ զիւտերն ու յօրինուածները վաղուց արդէն զըկել են մարդուս քիչշատ հանդիսաւ կեանքից և մղել են լարուած տենդային գործունելութեան:

Եւ ինչ է տալիս մարդուս այդ շատագումը. լոկ նիւթական օգուտ, որի համար մինչեւ դադաղ աշխատում է:

Շատ մարդիկ են ընկճվում, ձնշվում ուժից վեր աշխատելով, և ինչ է գրանց վերջնական նպատակը, հարսաութիւն, բարեկեցութիւն ձեռք բերել: Բայց մարդուս այդ ագահ ու զրեթէ անցագ ձրդառումներն առաջ են բերում և նեարդային զանազան ցաւեր, որ աեսնում էնք համարեա մեր ամեն մեքայլափոխին, ամեն հասակի ու դասակարդի մէջ:

Այդ տեսակի տով մեր զարն ամենայն իրաւունք
նեարդային զար ողէաք է կոչել:

Ամերիկան՝ որաեղ այժմեան քաղաքակրթու-
թիւնն անտաելի արագութեամբ ու լայն ծաւալով է
զարդացած, ամէն տեսակ նեարդային հիւսնդու-
թիւնների հայրենիք է համարվում:

Այժմեան կեանքի անմիտ ու շատ կողմերով
վնասակար հոգսերը մարդկութիւնից մասւոր ու-
ժերի աշխաղին վատնումն են պահանջում։ մարդս
համարեա անխուսափելի կերպով հեռանումէ կա-
նոնաւոր կեանքից, զրկվումէ կանոնաւոր մոռնդից,
հանդսաւութիւնից, քնից և կամաց տկանց նրա
կեանքն առողջապահութեան հիմնական կանոննե-
րին հակառակ է ընթանում։

Բայի զրանից՝ անդապրում զդրվիւնն ու աղ-
մուկներն, նիւթական մեծամեծ վնասներն ու ծա-
ռայութեան մէջ բարոյական պատսախանատուու-
թիւնն, այս ամէնը նոյնպէս մարդուս նեարդերը
խորապէս խախտում են։

Այսպիսի կեանքը վերջ ի վերջոյ մարդուս ու-
ժաթափ է անում, խանդարում նրա կազմուածքն,
առաջ է բերում արեան պահատութիւն և նուաղե-
ցնումէ մարմնական ու հոգեկան ուժերը. իսկ յե-
տոյ շատ անդամ առաջ են գալիս ամեն տեսակ
տկարութիւններ, որոնք որդոց որդի են անցնում։

Եթէ այս բոլորին աւելացնենք և նոյն վնասա-
կար երեսյթները կանանց և օրիորդների կեանքից՝
որոնք ապագայում կրթիչ մայր են լինելու, եթէ
ի նկատի առնենք նրանց խելք ու սրտի թեթեու-

թիւնը, կամքի, հաստատամութեան պակասութիւնը, այն անքուն զիշերները, որ անց են կայնում գրաւիչ վիպատնութիւններ կարգալով, կամ շարունակ մտածելով թէ ինչպէս անեն, որ ամեն անդամ դուրս գալիս աջքի ընկնեն իրանց շքեղ հազուսառվ, գեղեցիութեամբ, այն ժամանակները որ անց են կայնում անմիտ ու առողջապահութեան հակառակ պայմաններում՝ մինչև լոյս երեկոյթներում, թարգոններում, զանազան կոնցերտներում՝ մնալով և այլն և այլն,—այն ժամանակ պարզ ու հասկանալի կրլինի, թէ ինչու մեր գարում նեարգային տկարութիւնները համարեա թէ համաճարակ են պարձել:

Մեր ժամանակի ախտերն աննկատելի կերպով և կարծես ակամայ՝ այս կամ այն ձեռվ, այս կամ այն հետեւանքներով մեր երեխաներին են անցնում:

Ի՞նչ միջոց կայ այդ ախտերից ու հիւանդութիւններից խուսափելու համար, կամ որ տեղ և ինչպէս կեանքի օսկէ կանոնը պէտք է որոնել:

«Առողջ հողին առողջ մարմնի մէջ»:

Պատասխանը շատ պարզ է և մեր նախնիք վաղուց բացարել են:

Մարզս կազմուած է հոգուց և մարմնից, որոնք իրարից կախումն ունին և անխուսափելի կեպով իրար վերայ են ներգործում:

Սյս ի նկատի առնելով, ամեն մի դաստիարակ պարտաւոր է հոգս առնելը որ այդ երկու կողմնել որքան կարելի է կանոնաւոր խնամքի տակ լինին և զարգանան:

Բայցի զրանից՝ ամենայն կերպ պէտք է աշխատել հաւասարակշռութիւն պահպանել այս երկու ուժերի մէջ:

Բոլոր մարդկութիւնն էլ այս սկզբունքի համաձայն պիտի կազմակերպէ իւր կեանքը, և թէ կամենումէ խսկապէս արժանի կերպով կատարել իւր աշխարհային գոյութեան խորհուրդը:

Եսա ծշմարիտ է այն խօսքը, թէ բնութեան մէջ մեղքերի թողութիւն չկայ, և թէ այնանդ մի անողոք օրէնք է տիրում:

Վաղ թէ ուշ ծնողաց ու պապերի մեղքերի բարօյական կամ մարմնական անկման պատճքը կերենայ անհատների կամ ամբողջ սերնդի վերայ:

Վիճակազրութիւնը տալիս է հոգեկան հիւանդների մի այնպիսի թիւ, որ մարդուս վերայ կարող է սարսափ ձգել բազմաթիւ են նաև նիհար, ֆիզիքապէս տկար, թոքախտաւոր և այլ այսպիսի ցաւերով տառապող անհատներ:

Այս տեսակ մարդիկ ոչ կեանքի են պէտք և ոչ էլ զործի, նրանք մի միայն հիւանդանոցների ու անկելամոցների գոյութեանն են ծառայում:

ԺԷ.

Ի՞նչ անենք, դարձեալ հարց ենք տալիս մենք մեզ, որտեղ որոնենք այս նեարգային և միեւնոյն ժամանակ երկաթէ դարում կեանքի յարմար զոր-

ծաղրութեան պայմաններ և մեր վերոյիշեալ սկըզ-
բունքներին հասնելու միջոցներ:

Յոյս տալու համար հէնց սյստեղ ամենից ա-
ռաջ ասենք, որ տռողջ միտքը — և փառք Աստու-
ծոյ —, դեռ բոլորովին չէ անհետացել երկրի երե-
սից, և հէնց մեր մէջ կան մարզիկ, որոնք մեծ ե-
ռանգով աշխատում են արծարծել մեր քննած սկըզ-
բունքների ճշմարտութիւնը:

Ինքը բնութիւնը մարզկանց համար սահմա-
նել է զարգացման մի նշանաւոր և բարերար օրէնք,
էվոլիցիայի օրէնքը, որ ձգտում է արատաւոր
ժառանգականութեան զէմ զործելու: Այդ բնական
օրէնքը նպաստել ունի վատ ու պակասաւոր յատ-
կութիւններ ուղղել հիւանդ երեսյթները բու-
ժել:

Եթէ սյդ բարերար օրէնքը չլիներ, ժառան-
գականութիւնը շատ ծանր ու վերին ասաիձանի
աղէտաւոր կլիներ շատ ազգութիւնների համար.
բայց էվոլիցիայի օրէնքը նրանց համար ազատա-
րար բժիշկ է, որ յոյս է տալիս սյզպիսի աղզերին
բնական զրութեամբ և բաւական ուղղուած կեան-
քի մէջ մանել. իսկ հետեւեալ սերնդի մէջ մի քանի
ցեղերի խոհեմ վարքի շնորհիւ՝ մինչեւ անգամ բո-
լորովին ազատուել ժառանգականութեան ծանր
հետեանքներից, որ ինչպէս մի ժառանգուած ա-
նէծք մի քանի սերունդ է ճնշում:

Ինչ վերաբերում է հոգու և մարմնի զարգաց-
ման, որ կախումն ունի կեանքի ընկերավարական
պայմաններից, ի հարկէ ոչ մի միջոց չի կարող այն-

պէս յաջող նպաստել նրանց, ինչպէս դպրոցն իր խելացի ու նպատակայարմար պայմաններով:

Եւ իրաւ ում յայտնի չէ, որ կրթութիւնը մե երկասյրի սուր է. նո կարող է շատ թոյլ մարդուն ուժեղ դարձնել, ապուշին ու թեթևամտիւր բաւական վայելուչ մարդ շնորհ և ընդհակառակը արատաւոր ու անառակ մարդուն բարեփոխել և բարոյական ու գործունեայ անդամ՝ դարձնել հասարակութեան համար:

Սյս երեսյթի պատճառը ի հարեւ այն է, որ նորահաս կազմուածքը զարգացման այն աստիճանի վրայ է զանվուճ, երբ իրաւ ֆիզիքական ու բայրոյական պատկերը դեռ չէ ձուլուել որ և է որոշ ձեռվ, երբ դեռ պահանջվումէ մշտական օգնութիւն, մշտական դեկավարութիւն և խնամք, որպէս զի յետոյ սյս կամ այն ձեր, ուժն ու պատկերն ստանայ:

Ահա թէ ինչու լաւ ու կանոնաւոր դպրոցը կարող է մարդկանց կեանքին վայլուն արդիւնք տալ, և ընդհակառակը՝ որ և է դպրոց օգտաւետ հիմնարկութիւն լինելու փոխանակ կարող է երիտասարդների առողջութիւնը և նոյն խոկ կեանքը կործանող հիմնարկութիւն դառնալ:

Սյս բանի վերաբերմամք գիտութեան մէջ արգէն ահազին քանակութեամնիւթ է հաւաքուած:

Ինչում կարող է կայանալ մեր դպրոցի ամենամեծ օգուարը մեր քննած նպատակին հասնելու վերաբերմամք:

Վերոյիշեալ բացատրութիւնների համաձայն

մեր հոգացողութեան մեծ մասը նուիրուած պիտի
լինի ամենից առաջ ուղեղի առողջութեան՝ որքան
կարելի է վաղ սկսելով նրան զարգացնելու շրջանի:

Եւ զրա համար նախ հարկաւոր է հեռու մնալ
այն ամենից, որ ուղեղի մնունդը կարող են փա-
ցնել ինչպէս օրինակ՝ վատ օդ, վատ կերակուր,
մանաւանդ պէտք է հեռու մնալ զրդուիչ ու հասա-
կին անհամապատասխան մտաւոր յոդնածութիւնից,
որ անթիւ մնասներ է բերում մեր երեխաներին:

Սուանձին ուշադրութիւն ուղեղ խնամելու վե-
րաբերմամբ պահանջում են ի հարկէ երեխաները,
որոնց վրայ նկատվում է զօրեղ նեարդայնութեան
բնական նշանները:

Ուղեղին լաւ մնունդ են մտակարարում մա-
քուր օդը, առողջարար կերակուրը, կանոնաւոր
քունը, մարմնական չափաւոր վարժութիւնները,
հասակին համապատասխան մտաւոր աշխատանք-
ներն ու հոգեկան տպաւորութիւնները:

Ուղեղը, նեարդներն ու զգայարանքներն այն-
չափ կարեոր զեր են խաղում մարդու մարմնի և
մանաւանդ հոգու զարգացման մեջ, որ նրանց մուաք
են մնուանում զէսլի լաւը, վսէմը, բարին, զեղե-
ցիկն ու ազնիւը և որի բանալիքները ծնողների ու
զասախարակների ձեռքն են:

Ապրելու համար անհրաժեշտ է մարդուս ե-
ռանդ, արիութիւն:

Եթէ հաց, վայելքներ ու հրճուանք ունիս,
եթէ պէս պէս արտօնութիւններ ես վայելում, բայց

միանգամայն եռանդից զըկուած ես, այն ժամանակ
այլ և այլ պատահարների խաղալիք կը գառնաս,
սիրեցեալ կնոջ, սեփական կրքերից սարուկ:

Եթէ օժտուած ես քելքով ու հեռատեսու-
թեամբ և ամէն ինչ հասկանում ես, ու մարդկանց
ճանաչում, բայց եռանդ չունիս, քո զիտութիւնը
անպտուղ կանցնի, գաղափարներոյ կը գառնան մի
դաստարկ պշտանք:

Մի միայն եռանդի, արիութեան միջոցով ո-
րոշ նշանակութիւն է ստանում բարութիւնն, ու-
րը, աղնիւն ու վսեմը և այն ամէնը, ինչ որ զրա-
ւում հմայում է մեզ:

Եռանդը—տիեզերքի տէրն է:

Բարոյական եռանդը ձեռք է բերվում աշխա-
տանքով և նրա զօրացման աղբիւրներից մէկն է՝
կեանքի նշանակութեան բարձր հասկացողութիւնը:

Կեանքը կոխւ է, և սրտ համար ոչ մի ջանք
չպէտք է խնայել մեծ ու ծշմարիտ կոխւը, ինչպէս
և կոռուզները՝ աղնուութեան ու շիտակութեան
զրօշմ են կրում իրենց վրայ:

Հաւաաք դէպի կեանք — նշանակում է հաւա-
տալ թէ կոռուի մէջ յաղթանակը միշտ ծշմարտու-
թեան կողմն է լինելու:

Զօրանանք, կոռուինք, տանջուինք այն յուտով
ու հաստատուն համոզմունքով, թէ ոչ մի աշխա-
տանք ի զուր չի կորչում, այլ անվերջ շարունակ-
փում է:

Սալքել նշանակում է զարդանալ աճել ամբողջ
կութեամբ՝ սրտով, մոքով, զիտակցութեամբ դառ-

նալ աւելի լաւ, աւելի ուժեղ՝ ֆիզիքապէս, մտա-
ւորապէս ու բարոյապէս:

Զարգացնել մարմին ու մկանունքներ, վարժ-
ուել սեփական ձեռներով ու աչքերով աշխատելու,
սովորել յոğunածութեան, յարմարուել դժնդակ կլե-
մայի, զիտենալ խոչնդուաների դէմ մաքառել, սահ-
ճահարել կրքեր ու ցանկութիւններ, ստիպել միտ-
քը դժուարին խնդիրների տոկալու, մի խօսքով—
կրթել ու կարգաւորել ամբողջ էութիւնը—ահա
թէ ինչի մասին պէտք է հոգայ ամէն ոք, եթէ
ուզումէ ընդարձակ մաքով մարդ դառնալ:

Այս ընթացքով մեր հայեացքն աւելի պարզ
կլցառնայ, մեր ձեռքը—աւելի զօրաւոր, քայլերս
—արագ. համարձակութիւն, անդորրութիւն ու խե-
լացի միտք՝ այս ընթացքի ընական հետեւանքն են
եթէ մեզնից իւրաքանչիւրը պատկանումէ իւր
հայրենիքին ու մարդկութեան, որից ամէն ինչ է սատ-
ցել եթէ իրեն յարգող անհատը սեփական խելքն
ու աշխանքը, իւր ոյժն ու ազդեցութիւնը հայրենիքի
ու մերձաւորների բարորութեան-է նուիրում, այդ
բոլորը՝ սկզբունքի ու կեանքի նպատակի համար է:

Այդ ըմբռնելով՝ կարելի է ամէն զիւրութեամբ
զո՞հ բերել վաղանցուկ հաճոյքները, որպէս զի
կեանքն աւելի անարատ, ողջախոհ ու կորովի մնայ.
այն ժամանակ մարդուս հոգին ել կլինի աւելի
զուարթ ու աւելի կայտառ:



